Դանիել Վարուժան

Ողորմություն

Սովամահ ժողովուրդին

– “Սովէ. հա՛ց, հա՛ց...” –
Ո՞վ կ'հեծե
Շեմին վրրա խրրճիթիս ո՞վ կը հեծե:
Սերրս մարած է օճախիս բոցին հետ.
Մեջս է մոխիր, շուրջս մոխիր. օ՛հ, ի՛նչ շահ
Մոխիրներու վրրա արցունք սերմանել:
Բան մը չունիմ, բա՛ն մը. այսօր իմ վերջին
Լումայով թույն գընեցի,
Ներսը թույնս իմ կը շաղվեմ:
Վա՛ղը եկուր գերեզմնոց, ո՛վ Անոթի,
Բուքին մեջե, կանուխ, երբոր գյուղին շուրջ
Գայլերը դեռ կը հաձին,
Վա՛ղը եկուր… պիտի ես
Շիրմիս մեջեն, իբրև հաց
Քերթողի սիրտս այդ մախաղիդ մեջ ձրգեմ.
Քերթողի սիրտս արյունդ, արյունն որբերուդ
Պիտի ըլլա ո՛րքան որ Վիշտրդ ապրի…
Վաղը եկուր գերեզմնոց, ո՛վ Անոթի: